ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 26 — 1901 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 26 — № 88

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տէլէֆօն № 253.

Տիկին Ա. Լուսինեան յայտնում է իր ծանօթներին, որ ապրիլի 27-ին, ուրբաթ առաւօտ, ժամ 10—11-ին պատարագ եւ հոգեհանգիստ կը կատարվի Խօջիվանքի եկեղեցում

ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ

մահվան միամեակի առիթով. 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Кавказъ» լրագրի հաղորդագրութիւնը. Սիմֆոնիական կօնցէրտ. Դարձեալ ջրի հարցի առիթով. Նամակ Պետերբուրգից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«КАВКАЗЪ» ԼՐԱԳՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

—

Կիրակի, ապրիլի 22-ին, ամբոխը, որ առաւելապէս բաղկացած էր տեղական գործարանների եւ արհեստանոցների բանուորներից, անկարգութիւններ արաւ Թիֆլիսի Սօլդատսկի բազարում: Օգուտ քաղելով կիրակնօրեայ տօնավաճառի առիթով հաւաքված ժողովրդի խուռն բազմութիւնից, կարգը խանգարողները, թւով 300-ից մինչեւ 400 մարդ, առանձին-առանձին, զանազան ճանապարհներով, իբր ծախող եւ առնողներ, հաւաքվեցին շուկայի հրապարակում: Առաւօտեան 11 ժամին մի քանի մարդիկ նրանց միջից, ցոյց անողներին միատեղ ժողովելու եւ հետաքրքրվողների ուշադրութիւնը դրաւելու համար, սկսեցին աղմուկ հանել եւ ապա արդէն ամբոխը, միանալով եւ մետաքսեայ կտորից մի դրօշակ բարձրացնելով, շարժվեց «Վելիկօկնեաժեսկի Նովոստներ»-ից Սօլդատսկի բազարով դէպի Գօլովինսկի պրոսպէկտը: Ոստիկանութիւնը առաջարկեց ամբոխին ցրվել, իսկ պրիստաւի օգնական Գէդէվանով ոստիկանական զինուորների հետ միասին փորձեց խլել դրօշակը, բայց դրան իբրեւ պատասխան տեղացին նրանց վրա հարուածներ գաղտնի բերված կարճ փայտերով եւ ծառի արմատաձողերով: Ամբոխի մէջ եղած անձերից մի քանիսը մինչեւ անգամ դաշոյններ մերկացրին: Զը նայելով խռովարարների թւական ահագին գերազանցութեանը, ոստիկանութեանը այսուամենայնիւ աջողվեց հէնց այդ տեղում պատռել եւ գրաւել դրօշակը: Ցուզված ամբոխը փորձեց առաջ գնալ, քարշ տալով հարուածներից ուշաթափված Գէդէվանովին եւ շարունակելով կատաղի պայքարը ոստիկանութեան դէմ: Շուկայում իրանց գործերով զանվող զինուորները, զօրքի զանազան մասերից, եւ շատերը տեղացի բնակիչներից, տեսնելով ոստիկանների դժուար դրութիւնը, ինքնաբերաբար մի քանի մարդուց բաղկացած խմբեր կազմելով, սկսեցին եռանդով օգնել ոստիկանութեան: Տեղի ունեցաւ ընդհանուր խառնակութիւն եւ կռիւ, որոնց անխուսափելի հետեւանքն եղան ճնաված ներ թէ մէկ եւ թէ միւս կողմից: Այդ ժամանակ ցոյց անող ամբոխի միջից արձակվեցին ըէվոլվերի վեց հարուածներ եւ ոստիկանական զինուոր Կիտանցեվ երկու գընդակով վէրքեր ստացաւ աղդրին եւ ուսին: Ոստիկանութեան եւ զինուորների միացած ջանքերով ամբոխի շարժումը այդ տեղում կանգ առաւ: Հեծեալ ոստիկանութեան զինուորների եւ ոստիկանական հեծեալ պահապանների հետ շտապով եկած ոստիկանապետը դարձեցրեց կռիւը, ձերբակալեց գլխաւոր յանցաւորներին եւ վերջնականապէս ցրվեց ամբոխը: Անկարգութիւնների տեղը նոյն ժամանակ եկաւ եւ նահանգապետը, ձի հեծած, դաշտային ժանդարմների ուղեկցութեամբ, եւ սկսեց ղեկավարել կարգի վերջնական վերահաստատութեան համար ձեռնարկած միջոցները: Միաժամանակ հասան եւ նահանգապետի կողմից կանչված կովկասեան սապէօրների առաջին բատալիօնը եւ Խօպերեան գնդից 30 կօզակներ եւ իրանց ներկայութեամբ նըպաստեցին այդ քաղաքամասի յուզված ազգաբնակութեան կատարեալ խաղաղացմանը: Անկարգութիւնները ընդհանրապէս, նրանց ծագման սկզբից մինչեւ շուկան խռովարար ամբոխից մաքրելը, տեւեցին մօտ քառորդ ժամ, իսկ այն ժամանակամիջոցը, երբ անկարգութիւնները սուր կերպարանք էին ստացել, տեւեց ոչ աւելի քան ութ րոպէ:

Այն անձերից, որոնք ղեկավարող դեր էին խաղում անկարգութիւնների մէջ, ոստիկանութիւնը ձերբակալեց տեղնուտեղը 41 հոգու, որոնց մեծ մասը բանուորներ են, մէկը՝ Խարկովի ուսանող եւ երեքը՝ կանանց բարձրագոյն կուրսերի ուսանողուհիներ, աքսորված Պետերբուրգից վերջին անկարգութիւնների համար:

Մինչեւ այժմ պարզված է, որ անկարգութիւնների միջոցին վնասվել են՝ ոստիկանապետ Կօվալեվ, որի ծունկը ջարդեց եւ ոտնաթաթը դուրս գցեց այն ձին, որի վրա նստած էր նա եւ որը վազ տալիս վայր ընկաւ, թէեւ այնուհետեւ նա շարունակում էր կատարել իր պարտաւորութիւնները դեռ էլի մի քանի ժամվայ ընթացքում. պրիստաւի օգնական Գէդէվանով, որ ստացել է ձեռքի եւ ձախ կողքի սաստիկ, բայց ոչ վտանգաւոր ջարդվածքներ. վերոյիշեալ ոստիկանական զինուոր Կիտանցեվ եւ մի քանի ուրիշները, որոնք ստացել են հարուածներ եւ թեթեւ վէրքեր:

Ցոյց անող ամբոխի միջից վնասվել են լուրջ կերպով՝ Մամալաձէ, որ ըէվոլվէր էր արձակում, եւ թեթեւ կերպով՝ դրօշակը կրողներից մէկը. աւելի կամ պակաս չափով սաստիկ ջարդվածքներ ստացել են ձերբակալվածներից 9 հոգի:

ՍԻՄՖՕՆԻԱԿԱՆ ԿՕՆՑԷՐՏ

—

Կիրակի, ապրիլի 22-ին, գերմանական ակումբի դահլիճում, կայացաւ Կայսերական ռուսաց երաժշտական ընկերութեան Թիֆլիսի ճիւղի երաժշտական ուսումնարանի աշակերտական երկրորդ սիմֆոնիական կօնցէրտը, ղեկավարութեամբ յիշեալ դպրոցի դիրեկտոր Ն. Ս. Կլենովսկու: Դահլիճը լիքն էր նուագասէր հասարակութեամբ: Ծրագիրը հետաքրքիր էր: Կօնցէրտը բացվեց Հայդընի D—dur սիմֆոնիայով, որը պ. Կլենովսկի շատ կենդանի կառավարեց, մանաւանդ Andente մասը, որ շատ աղդու էր:

Շատ գեղեցիկ նուագեցին երկու դաշնամուրի վրա օր. Արամակլիսեան եւ օր. Ֆլորինա Շումանի վարիացիաները մի խորիմաստ թէմայի վրա: Վարիացիա նշանակում է զարդարումն կամ զարդացումն. մի որ եւ է երաժշտական թէմա (եղանակ) նուագվում է իր պարզ ձեւից յետոյ զարդարված, գեղեցկացրած եւ բարդացրած ձեւով, նման մի սոխակի, որը քանի ժամ էլ որ երգէ, մի անգամ երգած վարիացիան մէկ էլ չի կրկնի:

Երգեցին պ. Բրօջիի աշակերտուհիներից տ. Զիթողցեան—մէցօ-սոպրանօ եւ օր. Նոսովիչ—կոլօրատուր-սոպրանօ, երկուսն էլ բաւական աջող:

Կօնցէրտում մեծ տեղ էր բռնում Բէթհօվէնի «Էգմօնտ» ուվերտիւրան, գերագոյն երաժշտագէտի գլուխ գործոցներից մէկը: Պ. Կլենովսկի ցոյց տուեց, որ իր աշակերտական օրկէստրը կարող է այսպիսի դժուար երկեր էլ լաւ նուագել: Բայց ամենից աւելի ուշադրութիւն դարձրին իրանց վրա երեք նուագողներ.—մէկը՝ Լեվինի աշակերտուհի դաշնակահար օր. Արամակլիսեան, միւսը Վիլշաուի աշակերտուհի ջութակահար օր. Բօնէս եւ երրորդը՝ Միքանդարիի աշակերտ գիմնազիստ Եղիազա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ

—

(Շարունակութիւն *)

Հայերը Հնդկաստանում առհասարակ վայրիվերոյ հասկացողութիւններ ունէին Հայաստանի մասին. այդ պատճառով էլ նրանք, այնքան հեռաւոր տեղից իրանց հայրենիքի համար ազատութեան ծրագիրներ կազմելիս, միամիտ չափազանցութիւնների մէջ էին ընկնում: Այսպէս են ցոյց տալիս Յակոբ Շահամիրեանի գրուածքները:

Մի շատ հետաքրքրական անձնաւորութիւն է Շահամիրեանը. արհեստով դերձակ, նա Նորջուղայից գնում է Հնդկաստան, այնտեղ ակնավաճառութիւն է սկսում եւ մեծ հարստութիւն ձեռք բերում: Բայց նրան տուած էր հասարակական գործիչի եռանդ: Եւ ահա նա նուիրվում է Հայաստանի ազատութեան գաղափարին: Կարողութիւն չունենալով նոյն իսկ կանոնաւոր կերպով հայերէն գրել, նա բաց արաւ տպարան եւ հրատարակեց իր աշխատութիւնները, որոնց կարելի է մի կատարեալ նորութիւն, մի չը տեսնված երեւոյթ համարել այն ժամանակներում:

1772 թւականին Շահամիրեանը Մադրասում հրատարակեց «Յորդորակ» անունով գիրքը, որի նպատակն էր, ինչպէս ասված է առաջին երեսում, սթափեցնել հայերին ծուլութեան քնից: Ի՞նչպէս էր նա սթափեցնում:—Բերում էր հայոց հին պատմութիւնը, նկարագրում էր հայերի 400 տարվայ տարկութիւնը եւ ասում էր, թէ պէտք է ազատվել Իսլամի լուծից: Իր ասածները հաստատելու համար Շահամիրեանը վերցնում էր մի Հայաստան՝ Կասպից ծովից սկսած մինչեւ Կիլիկիա եւ երեւայական թւերով ցոյց էր տալիս, թէ ինչ կայ այդ տարածութեան վրա, որ հայերի սեփականութիւնն է կազմում: Այդ հաշւով դուրս էր գալիս, որ Հայաստանում ապրում են 27,864,000 հոգի, որոնց կէսը՝ այն է, 13,935,000 հոգի, հայեր են: Ընդունելով որ հայերի թւի կէսը իգական սեռն է կազմում, դուրս գալով նաեւ երեխաների եւ հարկերից ազատների թիւը, Շահամիրեան ասում էր թէ 5,224,500 հայեր հարկատու են: Այդ բազմութիւնը տալիս էր տիրող կառավարութիւններին գլխահարկ եւ ուրիշ տուրքեր՝ 20,898,000 ոսկի: «Ահա տեսէք թէ մեր կամքով օրքան անհուն եւ անչափ փող ենք տալիս այլազգիներին»—բացականչում է հեղինակը: Հէնց այդ գումարը, որ ամեն տարի դուրս էր գալիս հայերից, բաւական չէր որ հայերը ազատութիւն ստանան: Բայց Շահամիրեանը ապատամբութիւն չէր քարոզում: Նա ասում էր, թէ դուրս կը գան հայ իշխաններ, որոնք իրանց ձեռքը կառնեն հայերի ազատութեան գործը: Պէտք է օգնել դրանց. բաւական է այդպիսիներին տալ այն հարկերի ու տուրքերի կէսը, որ առնում են այլազգիները հայերից,—եւ այնուհետեւ ինքն ըստ ինքեան կազմակերպված կը լինի հայկական ազատութիւնը: Ի հարկէ, ազատարար իշխանի ջուխտ ձեռքերը բաւական չէին մի այդպիսի հրաշք գործելու համար. հայերը պիտի օգնեն նրան, տալով զօրք: Բայց ազատողը, գլխաւորապէս, պիտի լինէին օտար պետութիւնների զօրքերը: Հայերի ամենագլխաւոր պարտականութիւնը պիտի լինէր փող տալը:

Հիմքը, ուրեմն, Օրիի ծրագիրն էր դարձեալ: Եւ կարծելով թէ այդ միջոցը միանգամայն բաւարար է ու հեշտ իրագործելի, Շահամիրեանը 1773-ին լոյս հանեց «Որոգայթ Փառաց» անունով գիրքը, որի մէջ դրված էր ազատ Հայաստանի կառավարութեան ձեւը: Այդ հետաքրքրական գրքի մասին այստեղ տեղը չէ երկար խօսել: Կասենք այսքանը, որ հնդկաստանցի հայ մեծատունը գտնվում էր հիւսիսային Ամերիկայի քաղաքական դէպքերի խիստ ազդեցութեան տակ. նա ինքն ասում է թէ իրան ոգեւորողը եղել է, ի միջի այլոց, Վաշինգտոնի սկսած ազատական մեծ գործը: Հէնց այդ պատճառով է, երեւի, որ անկախ Հայաստանի համար վարչական սիստեմ կազմելիս նա իբրեւ սկզբունք ընդունում էր այն, որ թագաւորական գահ չը պիտի լինի Հայաստանում, այլ իւրաքանչիւր հայ պիտի մասնակցէ երկրի կառավարութեան: Դա մի հանրապետութիւն էր, որի պաշտօնեաները ընտրվում են ժողովրդի քուէով: Երեք տարի ժամանակով ընտրվում էր եւ կառավարութեան գլուխը կամ նախարարը: Բայց այս կանոնը թոյլ էր տալիս եւ բացառութիւն. եթէ հայ հին իշխանական տոհմից ծագում ունեցող մէկը երեւան գայ, նա կարող է մինչեւ մահ նախարար մնալ: Այդ յօդուածի հիման վրա Շահամիրեանը բանակցութիւն սկսեց վրաց Հերակլ թագաւորի հետ. ուղարկեց նրան «Որոգայթ Փառաց»-ը, խոստացաւ դրամական աջակցութիւն եւ առաջարկեց նրան հայկական հանրապետութեան նախագահի պաշտօնը, որովհետեւ վրաց թագաւորները, ինչպէս յայտնի է, Բագրատունիների տոհմից էին: Եւ Հերակլը, ինչպէս երեւում է, բոլորովին անկարելի չէր համարում այդ ծրագիրը. նա բանակցութիւններ էր վարում Շահամիրեանի հետ յատկապէս այդ նպատակի համար Հնդկաստան ուղարկված վարդկանց միջոցով:

Շահամիրեանը գրագրութիւն ունէր եւ Սիմէօն կաթողիկոսի հետ: Եւ երբ Սիմէօնի մտերիմ աշակերտ Յովսէփ արքեպիսկոպոսը սկսեց գործել Ռուսաստանում, Շահամիրեանի եւ նրա մէջ հաստատվում է կապ թղթակցութիւնների միջոցով, որոնց առարկան, ի հարկէ, Հայաստանի ազատութիւնն էր: Յովսէփը գործում է, միջնորդ հանդիսանալով ռուսաց կառավարութեան եւ հայերի ու վրացիների մէջ: Պատեմկինի համարձակ ու վիթխարի ծրագիրների մէջ վերջին տեղը չէին բռնում Հնդկաստանի հայերը:

1780 թւականի ձմեռը Պետերբուրգում հայերի համար մեծ յոյսեր էր պատրաստում: Այդտեղ էր Արղութեանը: Կայսրուհին իր բարձր ուշադրութեան նշանները թափում էր նրա վրա: Որոշված էր Կասպից ծովի եւ Պարսկաստանի վրայով հասնել Հնդկաստանին եւ հաստատվել այնտեղ: Այդ մեծ մտքի հետ կապված էր Անդրկովկասում քրիստոնեաների անկախ իշխանութիւն ստեղծելու ծրագիրը: Հռչակաւոր Սուվորովը Եկատերինայից հրաման ստացաւ գնալ Աստրախան եւ այնտեղ ուսումնասիրել ձեռնարկվող գործի մանրամասնութիւնները: Սուվորովը այցելեց Յովսէփ արքեպիսկոպոսին Յովհաննէս Լազարեանի տանը, տեղեկութիւններ հարցրեց Անդրկովկասի եւ մասնաւորապէս հայերի մասին: Արղութեանը, բացի բերանացի մանրամասն տեղեկութիւններից, տուեց Սուվորովին եւ գրաւոր զեկուցում *), որի մէջ ցոյց էր տալիս, թէ ռուսաց զօրքերը Անդրկովկասում ինչ ճանապարհներով կարող են առաջանալ եւ ինչ տեսակ օգնութիւն կարող են ստանալ Ղարաբաղի մէլիքներից: Սուվորովը, միանգամայն բաւական մնալով Արղութեանի տուած բացատրութիւններից, յուսադրեց նրան թէ հայերը կը ստանան իրանց ցանկացած անկախութիւնը:

Աստրախանում Սուվորովը մնաց երկու տարի եւ համոզվեց, որ հնդկական ծրագիրը անիրագործելի է: Բայց իշխան Պոտեմկին, թողնելով հնդկական արշաւանքի միտքը, իր ուշադրութիւնը այժմ կենտրոնացրեց Անդրկովկասի վրա: 1782 թւին նա հիւսիսային Կով-

*) «Մշակ» № 79.

*) „Собраніе актовъ“, Москва, 1838. ч. II, եր. 68.

բեան։ Այս երեքն էլ կարող են լինել ամեն մի կոնցէրտի զարդ։

Օր. Արամակլիսեան նուագեց դաշնամուրի վրա սոլո, օրկէստրի հետ, Շոպէնի դժուար «E—moll» կոնցէրտը։ Նրա տեխնիկան շատ կանոնաւոր զարգացած է, տուչէն (մատների զարկուածքը) վերին աստիճանի քնքոյշ եւ բնորոշ է, ֆրազիրովկան՝ գեղեցիկ։ Օր. Բոնէս՝ Վէնիավսկու «D—moll» հիանալի կոնցէրտը նուագեց մեծ աջողութեամբ եւ դիտակցօրէն։ Նրա տեխնիկան ջութակի դժուարութիւններին յաղթում է, իսկ աղեղը ազդու տեմբր է ստեղծում, միայն ցածր ձայները բասօկլարի վրա մի քիչ թոյլ են, բայց ժամանակով կարող են զօրեղանալ։

Պ. Եղիազարեան նուագեց դաշնամուրի վրա օրկէստրի հետ Լիստի ունգարական ժողովրդական երգերի վրա գրած մեծ ֆանտազիան։ Լիստը, վիթխարի հեղինակ-դաշնակահարը, ունէր շատ երկար մատներ, մի ափը կէս արշինաչափ, դրա համար էլ նրա բոլոր գրուածքները աղմկալի եւ սարսափելի դժուար պիէսներ են։ Այնու ամենայնիւ, ֆանտազիան պ. Եղիազարեան այնպէս նուագեց, որ զարմանք ազդեց հասարակութեան։ Այս երեք ոյժերն էլ լաւ ապագայ են խոստանում, եթէ աշխատեն։

Ռէզոնանսը (ձայների արձագանքը) այս անգամ լաւ չէր. օրկէստրի ոյժը պիանոյից թոյլ էր։ Հարկաւոր է կամպիանոն էլ օրկէստրի հետ բեմի կամարից ներս դնել եւ կամ օրկէստրը եւս պիանոյի հետ կամարից դուրս հանել, որպէս զի միմեանց հակառակ բեզոնանս չը ստացվի։

Կարա-Մուրզա

ԴԱՐՁԵԱԼ ՋՐԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ Երեւանից)

—

Երկաթուղու վարչութիւնը բացասեց քաղաքային խորհրդի առաջարկութիւնը՝ որոշ պայմաններով ընկերովի բերել «Ղրռխ-Բուլաղի» ջուրը։ Այժմ քաղաքը այլ ճանապարհով ուզում է իրագործել մեր ժողովրդի այդ կենսական հարցը. ահա այդ նպատակով երկու շաբաթից աւելի Թիֆլիսումն էր գտնվում Երեւանի քաղաքագլուխը, որը, այս օրերս վերադառնալով, բերել է իր հետ մի քանի պրոէկտներ այլ եւ այլ ճարտարապետների կողմից առաջարկված։ Ապրիլի 17-ին դումայի դահլիճում տեղի ունեցաւ ձայնաւորների մասնաւոր խորհրդակցութիւն, որտեղ քաղաքագլուխը կարդաց երկու առաջարկութիւնները։

Ճարտարապետ Պասէկ առաջարկում է տալ իրան իրաւունք անցկացնել ջրանցքը, կառուցանել տրամվայ եւ էլէքտրական լուսաւորութիւն, որը Նրա ծրագրով կը նստի 300,000 ռուբլի, այն պայմանով, որ քաղաքը պարտաւորվի պարտքը հանգցնել 10 տարվայ ընթացքում, վճարելով գումարին 7%։

Ճարտարապետ Միխայլով, որը ծանօթ է մեր քաղաքի դիրքին եւ նրա աղբիւրներին, եւ որը, ինչպէս պատմում են, Քութայիսի եւ Բաթումի ջրանցքներ անցկացնողն է, առաջարկում է իրան տալ ջրանցքի եւ տրամվայի կոնցեսիան 40 տարվայ ժամանակամիջոցով հետեւեալ պայմանով։ Անցկացնել 18 վերստի վրա գտնվող «Ղրռխ-Բուլաղի» ջուրը քաղաք, քաղաքի սահմանից, այն է ջրամբարից սկսած եւ անցկացնել քաղաքի մէջ 8 վերստ երկարութեամբ ցանց 6 ծորակով (кранъ)։ Խողովակները լինելու են մետալից էմալով պատած. ջրանցքի ճանապարհի վրա գտնվող քաղաքապատկան հողերը տրվելու են ձրիաբար, իսկ մասնաւոր եւ պետական հողերը գնվելու են ի հաշիւ կոնցէսիանտի։ Կոնցէսիանտը օգտվելու է 40 տարի ժողովրդի գործածութեան համար բաց թողած ջրի 100 վեդրօն 30 կոպէկով, բաղնիքների համար 10 վեդրօն 1 կոպ., հասատութիւնների համար 5 վեդրօն 1 կոպէկով, եւ որպէս զի ժողովուրդը հնարաւորութիւն չունենայ օգտվել այժմեան ջրերից, նոյեմբերի 1-ից մինչեւ ապրիլի մէկը փակել այժմեան բոլոր առուները եւ աղբիւրները, միմիայն ամառը բացելով բաղերը եւ պարտէզները ջրելու համար։ Տրամվայը առաջին երկու տարին լինելու է ձիաքարշ, այնուհետեւ էլէքտրական. այդ ոյժը մատակարարելու է ջրանցքը, չնորհիւ իր բարձր դիրքի։ Տրամվայից օգտվելու պայմանները առ այժմ չեն ստացված։ Քառասուն տարին լրանալուց յետոյ ջրանցքը եւ տրամվայը ամբողջովին անցնում են քաղաքի ձեռքը, իսկ քաղաքը, եթէ կամենայ ժամանակից առաջ յետ դնել, այդ կարելի է ջրանցքի անցկացնելու քսաներորդ տարուց յետոյ։ Միխայլովի նախահաշուով այդ ջրանցքի եւ տրամվայի կառուցումը կը նստի 250,000 ռուբլի։ Այս երկու առաջարկութիւններից գլխաւոր ուշադրութիւնը դարձված է երկրորդի վրա։ Այսպիսով կրկին ջրի հարցը կը մտնի հերթական հարցերի շարքը։ Բայց որովհետեւ այստեղ չօշափվում է գլխաւորապէս ջրի արժէքը, որից ծածկվելու է այդ ծախքը եւ վաստակ բերելու կոնցեսիանտին, ինքն ըստ ինքեան հարց է ծագում, արդեօք նոր անցկացրած ջրանցքը իր նպատակին կը ծառայէ, եթէ ջուրը փողով տրվելով անխտիր ամենքին, ազգաբնակութեան չքաւոր մասը շարունակէ գործածել այժմեան առուների եւ կամ, հակառակ դէպքում, ջրհորների կեղտոտ ջրերը։ Երեւակայեցէք, մի չքաւոր ընտանիք, որը անկարող լինի վճարել ամիսը նոյն իսկ 100 վեդրօ ջրի գին—30 կոպ.։ Առ այժմ այս կասենք. նախ ամբողջ քաղաքի համար 6 ծորակը շատ քիչ է. երկրորդ ջուրը պիտի գնահատել 3 վեդրօն 1 կոպէկից էլ էժան եւ, որ ամենագլխաւորն է՝ չքաւորներին ջուրը տալ անպայման ձրի։

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Ապրիլի 1-ին

Պետերբուրգում, երկրագործութեան պ. մինիստրի նախագահութեամբ մարտ ամսին կազմված գիւղատնտեսական խորհուրդը, իր մի շարք նիստերում մշակելով գիւղատնտեսական եւ արդիւնագործական ցուցահանդէսների նորմալ կանոնադրութեան նախագիծը, ի միջի այլ խնդիրների, ուշադրութեան է առել պարգեւատրութեան հարցը։

Նոր կանոնադրութիւնը որոշել է ուղղել ցուցահանդէսներում մինչեւ այժմ գործադրված պարգեւատրութեան անարդար ձեւը, որով ցուցահանդէսների ժիւրին պարգեւատրում էր ի ցոյց բերած արդիւնքի տիրոջը, առանց հետաքրքրվելու, թէ էքսպօնենտը ինչ չափով է մասնակցել հանդէս դրած առարկայի կամ արդիւնքի կատարելագործութեանը։

Շնորհիւ պարգեւատրութեան այս եղանակի, շատ անգամ պարգեւի էր արժանանում եւ օգտվում պարգեւից մի անձ—լինի նա կալուածատէր թէ գործարանատէր, որը ցուցահանդէսում բերած իր առարկայի մէջ մասնակցել էր լոկ իր դրամագլխով—այն ինչ ի ցոյց դրված առարկան իր կատարելագործութեամբ, ազնուացումով եւ բարձր արժէքով պարտական էր այն մասնագէտին, արհեստաւորին, աշխատաւորին, որը որպէս վարձկան ծառայելով եւ գործելով այս կամ այն կալուածքում, գործարանում, ձեռնարկութեան մէջ, դրել էր արդիւնքի վրա իր տասնեակ տարիների ընթացքում ձեռք բերած գիտութիւնը, հմտութիւնը եւ եռանդը. ահա այս վերջինը, իսկական պատճառը պարգեւատրութեան, միշտ մոռացված եւ առանց վարձատրութեան էր մնում թէ ցուցահանդէսների դատաւորների կողմից եւ թէ, որ ամենից ցաւալին էր, նրան մոռանում էր տէրը, որը վայելելով ուրիշի մտքի եւ ձեռքի արդիւնքի պտուղը, անխղճօրէն շահագործում էր ստացած պարգեւը յօգուտ իր գրպանի։

Ահա այս անարդար դրութիւնը վերացնելու նպատակով է, որ Պետերբուրգում գտնվող գիւղատնտեսական խորհուրդը ցուցահանդէսների համար մշակած նոր նորմալ կանոնադրութեան մէջ մտցրել է հետեւեալ յօդուածը.

«Պարտաւորեցնել էքսպօնէնտներին ի ցոյց ուղարկվող առարկայի հետ միասին հաղորդել ցուցահանդէսի խորհրդին այն անձանց անունները, որոնք նպաստել են ի ցոյց ուղարկված առարկայի կատարելագործմանը, որպէս զի ժիւրին հնար ունենայ պարգեւատրելու այդպիսիներին»։

Ամբողջ սրտից ողջունելով գիւղատնտեսական ցուցահանդէսների համար խմբագրված նորմալ կանոնադրութեան այս արդարացի որոշումը, յոյս ունենք, որ առաջիկայ կովկասեան ցուցահանդէսի խորհուրդը եւ դատաւորները առաջինը կը լինեն գործադրող պարգեւատրութեան այս արդար եղանակը, որով նա կը լինի նաեւ Ռուսաստանում եղած ցուցահանդէսների մէջ առաջին արդար գնահատող եւ պարգեւատրող ցուցահանդէսը, որով խրախուսած կը լինի մի կողմից մինչեւ այժմ զրկված մտաւոր ոյժին եւ թէ միւս կողմից նպաստած կը լինի այս կամ այն արդիւնքի յարատեւ կատարելագործութեանը, առանց վնասելու դրամատէրին։

Գիւղատնտես՝ Ա. Աթանասեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, ապրիլի 25-ին

«Մուրճ» ամսագրի № 4-ի մատենագրութեան բաժնում պ. Հ. քննադատում է Զէյթունցիի «Զէյթունի անցեալէն եւ ներկայէն» գրքի առաջին մասը։

Իմ նպատակս չէ վէճի բռնվել պ. Հ.-ի հետ մի թեթեւ քննադատական ակնարկի առիթով։ Նախ, քննադատութեան քննադատութիւնը կարող է միտք ունենալ բացառիկ դէպքերում, որոնցից չէ ներկայ դէպքը, եւ երկրորդ, ինչպէս ռուսներն ասում են, «на чужой ротокъ не накинешь платокъ»։

Սակայն երբ քննադատը աղաւաղում է փաստերը, անհրաժեշտութիւն է ծագում վերականգնել ճշմարտութիւնը։

Ով որ կարդացել է պ. Զէյթունցիի գիրքը, նկատած կը լինի անշուշտ, որ նա ունի երեք անվիճելի արժանաւորութիւններ։ Առաջինը, որ հեղինակը ականատես է եղել իր նկարագրած պատմական դէպքերից շատերին, տասնիններորդ դարի վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում Զէյթունում կատարված անցքերին։ Երկրորդ, գիրքը տալիս է մեզ մի քանի հատուածներ ձեռագիրներից, որոնք, յամենայն դէպս, անհետաքրքրական չեն, եւ մի շարք աւանդութիւններ ու աշուղական ոտանաւորներ, որոնք, նոյն իսկ իրանց այն մասերում, որտեղ ազգասիրաբար կամ առասպելասիրաբար աղաւաղվում է պատմական ճշմարտությունը, հանդիսանում են ժողովրդական գեղեցիկ գրականութեան նիւթեր։ Երրորդ, գիրքը տալիս է մեզ մի քանի հատուածներ Զէյթունցիների ազգագրական կեանքից, որոնք, յամենայն դէպս, անհետաքրքրական չեն։ Չորրորդ, գիրքը ունի մի շարք մանրամասնութիւններ Զէյթունի մասին, որոնք, նոյն իսկ իրանց այն մասերում, որտեղ ազգասիրաբար կամ առասպելասիրաբար աղաւաղվում է պատմական ճշմարտությունը, հանդիսանում են ժողովրդական գեղեցիկ գրականութեան նիւթեր։ Երրորդ, գիրքը տալիս է մեզ մի քանի հատուածներ Զէյթունցիների ազգագրական կեանքից, որոնք, յամենայն դէպս, անհետաքրքրական չեն։ Չորրորդ, գիրքը ունի մի շարք մանրամասնութիւններ Զէյթունի մասին, որոնք, նոյն իսկ իրանց այն մասերում, որտեղ ազգասիրաբար կամ առասպելասիրաբար աղաւաղվում է պատմական ճշմարտու-

---

կատում եղած ռուս զօրքերի հրամանատար նշանակեց իր ազգական Պաւել Պոտեմկինին եւ յանձնարարեց նրան սերտ յարաբերութիւններ սկսել մահմեդական եւ քրիստոնեայ իշխողների հետ։ Գեներալ Պոտեմկին մեծ հմտութեամբ կատարեց իր հռչակաւոր ազգականի յանձնարարութիւնը. նա բանակցութիւններ սկսեց Հերակլ թագաւորի հետ, որ կամենում էր ռուսաց հպատակութիւն ընդունել, կովկասեան լեռնականների զանազան ցեղերից պատգամաւորներ պահանջեց եւ ուղարկեց նրանց իշխան Պոտեմկինի մօտ։ Նոյնպիսի պատգամաւոր նա ուղեց եւ Ղարաբաղի մէլիքներից, բայց սրանք չը կարողացան մարդ ուղարկել. ուստի, Յովսէփ արքեպիսկոպոսի առաջարկութեամբ, պատգամաւոր եկաւ Արարատեան երկրից, որի հայ մէլիքներն էլ այդ ժամանակ Ղարաբաղի մէլիքների դիրքն էին բռնել Ռուսաստանի վերաբերմամբ։ Այդ պատգամաւորն էր Ստեփան Դաւթեանը, որին յատկացրվեց «Արարատեան դեսպան» անունը։ Դաւթեանն էլ, ինչպէս միւս ազգերի ներկայացուցիչները, ուղարկվեց Պոտեմկինի մօտ։ Բոլոր պատգամաւորներին իշխանը պարգեւներ տուեց. Արարատեան դեսպանն էլ ստացաւ պրեմիեր—մայորի աստիճան։

1783 թւականին Գեորգիեվսկ քաղաքում Հերակլի եւ ռուսաց կառավարութեան մէջ կնքվեց դաշնագիր, որով վրաց թագաւորը հպատակվում էր Ռուսաստանին յայտնի պայմաններով։ Յովսէփ արքեպիսկոպոսն էլ ներկայ էր այդ նշանաւոր պատմական դէպքին, որ ռուսաց տիրապետութեան համար ճանապարհ էր բաց անում դէպի Անդրկովկաս։ Հերակլի հետ սկսած բանակցութիւնների մէջ ժամանակցութիւն էր ունեցել եւ Արղութեանը, որ միշտ գրագրութիւն ունէր վրաց թագաւորի եւ նրա որդիների հետ։ Այդպիսով վճռվում էր Վրաստանի հարցը։ Մտնելով Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ, Վրաստանը ապահովում էր իր քաղաքական գոյութիւնը, ռուսաց զօրքերի օգնութեամբ նա տիրապետող դիրք պիտի բռնէր Անդրկովկասի մահմեդական իշխանութիւնների մէջ եւ լայնացնէր իր սահմանները։ Մնում էր հայերի հարցը։

Գեներալ Պաւել Պոտեմկինի միջոցով իշխան Պոտեմկին այսպիսի հարցեր առաջարկեց Արղութեանին. «1) Մեծ Հայաստանի երկիրը, ընկնելով օրէնքով անմաքուր թիւրքերի եւ պարսիկների ձեռքը, այսքան երկար դերութիւնից յետոյ էլ պահում է արդեօք ոգու ոյժը, որ կարեւոր է ազատ հոգու համար։ Գերութիւնը եւ զանազան ճնշումները արդեօք չէն ոչնչացրել սրտերի մէջ ազնիւ զգացմունքները։ Բանականութեան ոյժը, օրէնքը եւ հաւատի ամրութիւնը այնքան արդեօք ներգործութիւն ունեն, որ սրտերի ներքին տրամադրութիւնը հակված լինէր խորտակելու նրանց ճնշող լուծը։ 2) Հաւատը ուժեղ կերպով է ազդում հայ ժողովրդի վրա եւ բարեպաշտութիւնը կարող է ժողովուրդը դրդելու առիթ դառնալ։ Կաթողիկոսի աստիճանը ինչ յարգանք ունի նրանց մէջ։ Մէլիքները պատշաճաւոր յարգանք ստանում են նրա սրբազան աստիճանին, իսկ ժողովուրդը հնազանդ է մէլիքներին. եւ վերջապէս, ինչ միջոցներ կան ժողովրդին հաճոյանալու, մէլիքների հաւատարմութիւնը միացնելու եւ հոգեւորականութիւնը գրաւելու համար։ 3) Հայերին պատկանող հողը այժմ ում տիրապետութեան տակ է։ Քանի՞ մէլիքներ կան Ղարաբաղի նահանգում եւ որքան ժողովուրդ կարելի է հաշուել այնտեղ։ Ստանալով այդ հարցերի պատասխանը, իշխան Պոտեմկին Արղութեանի միջոցով Կայսրուհու անունից յուսադրեց Ղարաբաղի մէլիքներին, որոնք, հաւաքվելով Գանձասարի վանքում, մեծ ուրախութեամբ լսեցին այդ լուրը եւ խընդրեցին, որ ռուսների խոստացած արշաւանքը շուտ սկսվի, որպէս զի իրանք էլ միանան նրա հետ եւ ազատվեն մահմեդական լուծից։ Պոտեմկինի կազմած ծրագիրը հետեւեալն էր. Ղարաբաղի եւ Ղարադաղի մէլիքութիւններից կազմել մի անկախ իշխանութիւն Ռուսաստանի հովանաւորութեան տակ. այդ անկախ իշխանութեան գլուխ կանգնեցնել ամենից շատ յարգված մէլիքներից մէկին եւ մշակել վարչութեան մի այնպիսի ձեւ, որ գրաւիչ լինէր բոլոր հայերի համար։ «Դրանով—գրում էր իշխան Պոտեմկին Եկատերինային—Ասիայում կը վերանորոգվի մի քրիստոնէական պետութիւն համաձայն Ձեր Կայսերական Մեծութեան խոստումներին, որոնք իմ միջոցով տուած են հայոց մէլիքներին»։

Ատրախանում պատրաստվում էր ռուսաց արշաւանքը, որ պիտի սկսվէր երկու կողմից—Թիֆլիսից եւ Դերբենտից։ Բայց գործողութիւնները այնպէս արագ ու հեշտ չէին կատարվում, ինչպէս ծրագրվում էին Թղթի վրա կամ բերանացի բանակցութիւնների մէջ։ Շուշու Իբրահիմ-խանը իմացաւ հայ մէլիքների գաղտնիքը եւ իր իշխանութիւնը պահպանելու համար միջոցներ ձեռք առաւ։ Նախ եւ առաջ պէտք էր ցոյց տալ ռուսաց կառավարութեան, որ հայ մէլիքների խոստումները այնքան էլ մեծ գին չը պիտի ունենան. ուստի, մարդ ուղարկելով Պոտեմկինի մօտ, յայտնեց որ ինքն էլ պատրաստ է Ռուսաստանի հպատակը դառնալ։ Պոտեմկինի պատասխանը անբաւարար էր եւ Իբրահիմը հասկանալով, որ ռուսները խուսափում են այդ հարցից, սկսեց իր ձեռքով դրստել իր գործերը։ Նա սաստիկ հալածանքներ հանեց հայ մէլիքների դէմ. երկուսին դաւաճանութեամբ բանտարկեց, իսկ Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին թունաւորելով սպանեց։ Թշնամութիւնը երկրի բնիկ տէրերի եւ եկուոր խանի մէջ աւելի սուր կերպարանք ընդունեց. մէլիքները, յոյս ունենալով ռուսների խոստացած օգնութեան վրա, սաստիկ դիմադրում էին Իբրահիմ-խանին. այժմ նրանք աւելի ստիպողաբար էին թախանձում Յովսէփ արքեպիսկոպոսին չտապեցնել ռուսների օգնութիւնը։ Արղութեանը գնաց գեներալ Պոտեմկինի մօտ, նամակներ էր գրում իշխան Պոտեմկինին, խնդրում էր օգնել եւ հաւատացնում էր, որ Ղարաբաղում ամեն ինչ պատրաստ է՝ ռուսաց զօրքերը ընդունելու եւ կերակրելու համար։ Յովսէփը յայտնում էր, թէ ինքը անձամբ կը գնայ Ղարաբաղ եւ կաթողիկոսի ու մէլիքների հետ բանակցութիւններ կը սկսէ։

Ռուսական արշաւանքը պիտի սկսվէր 1784 թւին, բայց ուշացաւ ամբողջ երեք տարի։ 1787-ին Հերակլ թագաւորը ռուսաց մի զօրաբաժնի հետ ուղարկվեց Իբրահիմ-խանի դէմ. հայ մէլիքները միացան այդ զօրքերի հետ եւ ջարդեցին խանի զօրքերը։ Բայց Գանձակի մօտ ռուսաց զօրաբաժինը Պոտեմկինից հրաման ստացաւ իսկոյն վերադառնալ Ռուսաստան. սկսվել էր ռուս-թիւրքական պատերազմը եւ ռուսաց կառավարութիւնը չէր կարող զբաղվել անդրկովկասեան մի խանի գործերով։ Հայ մէլիքները մնացին յուսահատութեան մէջ։ Ղարաբաղում մնալ նրանք այլ եւս չէին կարող, ուստի հեռացան երկրից. նրանց հպատակներից 500 ընտանիք դուրս եկան Ղարաբաղից եւ բնակութիւն հաստատեցին Շամքօրում։ Այդտեղ մէլիքները ստիպված էին դիմադրել ոչ միայն թուրք խանին, այլ եւ Հերակլ թագաւորին։ Վերջինս, Իբրահիմ խանին հաճոյանալու համար, պատրաստ էր իր մօտ գտնվող երկու մէլիքներին յանձնել նրա ձեռքը այն պայմանով, որ խանն էլ վերադարձնէ 200 բօրչալուեցի թուրք ընտանիքներ, որոնք Հերակլին էին պատկանում։ Այսպէս էին հասկացվում քրիստոնէութեան շահերը. եւ այսպէս էր այն մարդը, որի վրա այնքան յոյսեր էին դրել հայերը...

(Կը շարունակվի)

թիւնը, այնու ամենայնիւ այն մեծ նշանակութիւնն ունեն, որ արտայայտում են հայ ազգի ամենահետաքրքրական մի ցեղի աշխարհայեացքը։ Երրորդ, հեղինակը ինքը, գանվելով զարգացման գրեթէ նոյն աստիճանի վրա, որի վրա կանգնած են բոլոր զէյթունցիները, լինելով, այսպէս ասած, Տաւրոսի Առիւծների մարմնից եւ արիւնից, իր պատմական նախի հայեացքներով հաւատարիմ թարգման է հանդիսանում զէյթունցի ժողովրդի աշխարհայեացքներին, այնպէս որ նրա բերանով խօսում է իսկապէս նորագոյն քաղաքակրթութեան «չարի եւ բարիի գիտութեան ծառից» դեռ չը ճաշակած զէյթունցի ժողովուրդը։

Իմ կարծիքով, այդ է պ. Զէյթունցու գրքի ամենաթանգագին յատկութիւնը։ Այդ տեսակէտից էր նայել այդ գրքի վրա եւ պ. Լ. «Մշակում» տպված իր մատենագրական յօդուածում։ Այդպէս չէ վերաբերվում գրքին պ. Հ.։ Նա հեշտ աշխատանք է վերցնում իր վրա ապացուցանել հեղինակի աշխարհայեացքի նախվութիւնը, եւ նոյն իսկ գրեթէ դրանով է միայն սահմանափակում իր քննադատութիւնը։

Սակայն ես չէի խօսի այդ քննադատութեան մասին, եթէ հարցը միայն դրանում լինէր։ Բանը նրանումն է, որ պ. Հ. ամենայն եռանդով ջարդելով բաց դռները, այնտեղ է հասնում, որ քննադատում է իբր պ. Զէյթունցուն պատկանող պատմական բացատրութիւններ եւ այնպիսի հատուածներ, որոնք մէջ են բերված իբր աւանդութիւններ, եւ նոյն իսկ այնպիսի մի հատուած, որ ձեռագրից է վերցրած եւ առաջ է բերված չակերտների մէջ։ Ահա այդ հատուածը։

«Այս իրողութիւն հետեւեալ կերպով կը պատմուէր յիշեալ ձեռագրին մէջ։ «Յամի տեառն 75 ս. Բարդողիմէոս առաքեալ, երբ Հայաստան կերթար զԲրիստոս քարոզելու, կը հանի Գերմանիկ (Մարաշ) ու քաղաքէն քառորդ ժամ հեռաւորութեամբ քառասուն ակ (Գըրդ կէօզ) կոչուած տեղը եւ այլն»։ («Զէյթունի անցեալէն եւ ներկայէն», եր. 15)։

Ահա եւ քննադատ պ. Հ.—ի խօսքերը.

«... Ինչպէս գրում է այդ գրքոյկի հեղինակը.—«Երբ Բարդուղիմէոս առաքեալ Հայաստան կերթար զԲրիստոս քարոզելու, կը հանի Մարաշ ու քաղաքէն քառորդ ժամ հեռաւորութեամբ Քառասուն ակ (Գըրդ կէօզ) կոչուած տեղը եւ այլն»։ («Մուրճ», № 4, եր. 201)։

Մեկնութիւնները աւելորդ են։

Տ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ կովկասեան ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովը ստանում է ամեն օր բազմաթիւ ծանուցումներ եւ խնդիրքներ՝ ցուցահանդէսում մասնակցելու ցանկութեան մասին։

—

Երկու օր է, որ Թիֆլիսում տեղում է անընդհատ անձրեւ։ Մեր ստացած տեղեկութիւններից երեւում է, որ շատ տեղերում վերջին օրերս եկել են յորդ անձրեւներ եւ մեղմացրել են երաշտի ազդեցութիւնը։

—

Առաջիկայ երկուշաբթի օր, ապրիլի 30-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում կը տեսնվի Գ. Սունդուկեանցի «Պէպո» պիէսի ներկայացման երեսնամեակը։ Այդ պիէսը առաջին անգամ Թիֆլիսում ներկայացվել է 1871 թուի ապրիլի 30-ին։ Յոբելեանական հանդիսաւոր ներկայացմանը պէտք է մասնակցեն Թիֆլիսի հին եւ նոր դերասանները։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի ռուսաց լիազօր դեսպան Ի. Ա. Զինովիէվ այս օրերս սպասվում է Պետերբուրգում։

—

Կայսերական կլինիկական ինստիտուտի դիրեկտոր պրոֆէսոր Սկլիֆասովսկուն Բարձրագոյն հրամայված է լինել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի խորհրդի անդամ։

—

Պետերբուրգի եւ Բերլինի մէջ տելեֆոնի դիծ անցկացնելու հարցը կը քննվի այս տարվայ ընթացքում։ Բերլինում այս հարցով հետաքրքրվում են ոչ միայն կառավարչական հաստատութիւնները, այլ եւ խոշոր արդիւնագործական ձեռնարկութիւնների տէրերը, որոնք մեծ համակրութեամբ են վերաբերվում այս գործին եւ մտադիր են իրանց կողմից, եթէ այդ հարկաւոր կը լինի, խոշոր նիւթական զոհաբերութիւններ անել։

—

Կարճ ժամանակից յետոյ նախ Պետերբուրգ եւ ապա Մոսկվա կը գնան Նիւ-Եորկից գիտական ազդագրական ընկերութեան ներկայացուցիչները՝ հետազօտելու համար ժողովրդական կրթութեան վիճակը Ռուսաստանում։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, ինկատի ունենալով քաղաքային առաջիկայ ընտրութիւնները, մի շատ նշանաւոր բացատրութիւն տուեց ապառիկների վերաբերմամբ։ Ինչպէս յայտնի է, ապառիկ ունեցողները իրաւունք չունեն մասնակցել ընտրութիւններին, այն ինչ ընտրողական ցանկերի մէջ մտցնվում են ոչ միայն անշարժ կայքեր ունեցողները, այլ եւ այն անձինք, որոնք վճարում են տուրք առեւտրի եւ արդիւնագործութեան համար։ Հէնց այդ ընտրողներին է վերաբերում մինիստրութեան բացատրութիւնը։ Անցեալ ընտրութիւնների ժամանակ դրանցից մի քանիսներին թոյլ չը տրվեց մասնակցել ընտրութիւններին այն պատճառով, որ նրանց կայքերի վրա ապառիկներ կային, իսկ այժմ մինիստրութիւնը պարզաբանեց, որ եթէ ընտրողը մտցրված է ցանկի մէջ ոչ իբրեւ տանտէր, այլ որպէս առեւտրա-արդիւնաբերական հարկ վճարող, նրա անշարժ կայքի վրա եղած ապառիկը արգելք չը պէտք է լինի նրան մասնակցելու ընտրութիւններին։ Բացատրութիւնը վերաբերում է եւ կալուածակիցներին. եթէ մի քանի անձանց պատկանող մի գոյքի վրա ապառիկ կայ, այն ժամանակ կալուածակիցների ներկայացուցիչը իրաւունք չունի մասնակցել ընտրութիւններին, բայց այդ ապառիկը չէ զրկում նրան ինքնուրոյն կերպով ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից, եթէ նա իրան անձամբ պատկանող գոյք ունի, ազատ ապառիկներից։

—

«Новости» լրագրին հաղորդում են, որ վերջերս ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ ստացվել են մի շարք միջնորդութիւններ միջնակարգ, արական եւ իգական դպրոցներից, խնդրելով թոյլատրել իրանց կրօնագիտութեան դասաւանդութիւն մտցնել կաթոլիկ դաւանութեան պատկանող աշակերտների եւ աշակերտուհիների համար։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը այդ բոլոր միջնորդութիւններին բաւարարութիւն տուեց, պարտաւորեցնելով, սակայն, խնդրատուներին, որ կրօնագիտութիւնը դասաւանդվի կաթոլիկ դաւանութեան աշակերտներին եւ աշակերտուհիներին անպատճառ ռուսերէն լեզուով եւ այն դասագրքերով միայն, որոնք հաւանութիւն են գտած ժողովրդական լուսաւորութեան գիտական կոմիտեի կողմից։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 15, 16 եւ 17-ին ընդհատումներով բաւական անձրեւներ տեղացին, օդը ցրտեց եւ քաղաքի մէջ շուտ շուտ գոյանում էր ցեխ եւ շատ շուտ չորանում։ Աստիճանաբար յուսահատութեան մօտեցող երկրագործի սիրտը լցվեց անսահման բերկրութեամբ։ Սարահարթերում, ինչպէս են Դարաչիչագը եւ Աբարանը, դեռ ցանքերը չեն վերջացել բոլորովին եւ այդ տեղերում նոր ցանված արտերը կատարելապէս ջրվեցին տեղացող անձրեւների շնորհիւ, իսկ դաշտերում թէեւ նոյնպէս անձրեւներ տեղացին, բայց մի քանի տեղեր, ինչպէս Էջմիածնի գաւառի մի քանի մասերը, որոնք առատ ջուր չունեն, դեռ անձրեւների կարիք են զգում։ Վերջին անձրեւների հետ մի քանի տեղերում տեղացել է նաեւ. կարկուտ, բայց լուրջ վնասներ չէ առաջացրել։ Մարտ ամսի վերջերում, շնորհիւ սարերի ձիւնով ծածկվելուն, բաւական ցրտեր արեց եւ գլխաւորապէս վնասվեցին խաղողի վազերը, որոնք նոր արձակել էին բողբոջներ։ Այսպէս, լուրերին նայած, Շարուր-Դարալագեազի գաւառում բաւական վնասվել են այգիները, նոյնպէս Արագածի փէչերի վրա եղող գիւղերը եւ Աչտարակը իր շրջականերով վնասվել են անժամանակ տեղի ունեցող ցրտերից»։

—

ՔՈՒԹԱԻԻՍԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 13-ին քաղաքային թատրոնում մի ներկայացում տուեց հայերէն ու վրացերէն լեզուներով դերասան պ. Պարոն-Սարգսեանը, մասնակցութեամբ տեղիս հայ եւ վրաց սիրողների։ Թատրոնը լիքն էր հայ եւ վրացի հասարակութեամբ։ Ներկայացրին հայերէն լեզուով «Սամուէլ» ողբերգութիւնը, «Կրոթ-Կրոթ» վոդեվիլը, իսկ վրացերէն լեզուով—«Սամշօբլօ» (Հայրենիք) ողբերգութեան վերջին երկու տեսարանները։ Ներկայացման վերջը սիրողների խումբը, օրիորդների ընկերակցութեամբ, երգեց հայերէն ժողովրդական երգեր։ Հայերէն ներկայացումը ընդհանրապէս շատ թոյլ անցաւ։ Խորհուրդ կը տանք պ. Պարոն-Սարգսեանին եւ նրա նման շրջուն հայ դերասաններին չը վայր գցել հայոց թատրոնի վարկը օտարների առաջ։ Ներկայացման միւս մասը՝ վրացերէն լեզուով՝ բաւական աջող անցաւ»։

—

ԱՄԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 15-ին տեղիս հասարակական ժողովարանի ամարային թատրոնում, տեղական թատերասէրների խումբը տուեց մի հայկական ներկայացում։ Ներկայացրին՝ «Երկու սիրահար», վոդեվիլ 1 գործ. Է. Տէր-Գրիգորեանի, «200,000»—Փառնակէսի եւ «Սուտ ճգնաւոր» Արարատեանի։ Վերջում տեղի ունեցան հայկական պարեր, ազգային շորերով։ Ներկայացումը անցաւ շատ աջող։ Առանձնապէս չնորհակալութեան արժանի են՝ տ.տ. Յովհաննիսեան եւ Գ. Գաբրիէլեան, որոնք խոչնդոտներին եւ արգելառիթ պատճառներին յաղթող հանդիսանալով, սիրով յանձն առան մասնակցել ներկայացմանը, որի աջողութիւնը գլխաւորապէս կախված էր յարգելի տիկինների աջակցութիւնից։ Մուտքը բաւարար էր. թատրոնը լիքն էր հայ հասարակութեամբ, որը սպասած տպաւորութիւնից աւելին ստանալով գոհ սրտով հեռացաւ թատրոնից։ Ներկայացումից գոյացած զուտ արդիւնքի մի մասը յատկացնվելու է անբերրիութիւնից վնասված գիւղացիների օգտին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ուրմի, ապրիլի 8-ին

Անցեալները ես առիթ ունեցայ Բարանդուզ գաւառի Դիզաթաքա գիւղը գնալ։ Դիզաթաքա գիւղը գտնվում է Ուրմիի հարաւային կողմը, 20 վերստ հեռաւորութեան վրա, Բարանդուզ գետի ափին. գիւղի մօտ գտնվում է մի բլուր, որ հաւանական է հին ատրուշանի աւերակ լինի։ Գիւղը բնակեցրած է հայ, աստի եւ թուրք բնակիչներով։ Հայերը 30—35 տուն են, ունեն մի աղքատիկ եկեղեցի։ Բոլորն էլ թուրքախօս են. սրանց հայ-քրիստոնեայ լինելը միայն պաս պահելուցն է երեւում։

Սրանից երեք տարի առաջ այս անմխիթար դրութիւնը Թաւրիզի Հայուհեաց ընկերութիւնը ի նկատի ունենալով, ուղարկեց ուսուցիչ եւ վարժուհի (ամուսիններ) եւ բաց արեց երկսեռ ուսումնարան։ Երեք տարի առաջ Դիզաթաքա գիւղում մի հայ չը կար իր մայրենի լեզուով խօսող, իսկ այսօր, գիւղի մատաղ սերունդը՝ 7—15 տարեկան տղայ եւ աղջիկ խօսում են հայերէն մաքուր գրական լեզուով, կարդում եւ գրում են, երգում եւ աղօթում հայ լեզուով։ Ուսումնարանի ամբողջ ծախսը, մինչեւ անգամ վառելիքի մասին հոգում է ընկերութիւնը։ Ես անսահման ուրախութեամբ վերադարձայ այդ գիւղից եւ անչափ շնորհակալութիւն յայտնեցի գիւղական ուսուցչին, որին առանց այլեւայլութեան կարելի է ասել—գաղափարի մարդ։ Մի բան, որից ուսուցիչը գանգատվում էր, ուսումնարանի համար առանձին շէնք չունենալն է. ուսուցիչը պարտաւորված տարին մի քանի անգամ այս ու այնտեղ է փոխադրում ուսումնարանը. թէ որքան անյարմար է այս բանը, մասնաւորապէս աշակերտների առողջութեան համար, այդ աւելորդ է ասել, որովհետեւ գիւղական սենեակները ոչ մի ժամանակ չեն կարող այդ բանի համար յարմարութիւն ունենալ։ Մենք լիայոյս ենք, որ ընկերութիւնը այս անյարմարութիւնը ի նկատի ունենալով, այս տարի կը ձեռնարկէ մի երկու սենեակներ կառուցանելու դպրոցի համար, որին անպատճառ գիւղացիքն էլ կը մասնակցեն իրանց օժանդակութեամբ։

Տ. Օտեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հէրբէրտ Գլադստոն յայտնեց Լիդսում, որ ներկայ հանգամանքներում կառավարութեան փոփոխութիւնը անհնարին է եւ նոյն իսկ ցանկալի չէ ազատամիտ կուսակցութեան տեսակէտից։ Այս յայտարարութիւնը մեծ դժգոհութիւն ծագեցրեց ազատամիտ դիմադրականների շրջանում։ Ահա ինչ է հաղորդում այդ մասին «Standard» լրագիրը. «Ազատամիտները չեն հերքում, որ Հէրբէրտ Գլադստոնի ասածները ճշմարիտ են, բայց, նրանց կարծիքով, այսպիսի յայտարարութիւն ազատամիտ կուսակցութեան գլխաւոր կարգադրողի (chief whip) կողմից խոհեմութիւն չէ։ Ասում են, որ Կէմպբէլ-Բաններման հրաժարվեց համերաշխութիւնից իր կրտսեր ընկերի հետ, եւ պարլամէնտական շրջաններում լուրեր են պատում, թէ այդ տարաձայնութիւնը կարող է վերջանալ Հէրբէրտ Գլադստոնի հրաժարմամբ ազատամիտ կուսակցութեան գլխաւոր կարգադրիչի պաշտօնից։ Ազատամիտ լրագիրները եռանդով քննադատում են այդ դէպքը եւ հարց են առաջարկում, թէ պէտք է արդեօք դիմադրական կուսակցութիւնը ձգտէ տապալելու մինիստրութիւնը ներկայ բոպէին։ Կարծիքները այդ մասին զանազան են։ Մինչդեռ մի քանի լրագիրներ յայտնում են, թէ ազատամիտները պէտք է իրանց հակառակորդներին թողնեն այն դժուարութիւնների լուծումը, որոնք առաջացել են պատերազմից, միւսները պահանջում են ազատամիտներից եռանդուն արշաւանք սկսել պահպանողականների դէմ մինիստրութիւնը տապալելու նպատակով։ «Morning Leader» ուղղակի յայտնում է, որ եթէ ազատամիտ կուսակցութիւնը իրան պատրաստ չէ հաւարում յանձն առնելու ներկայումս գոյութիւն ունեցող հարցերի լուծումը, այդ դէպքում ինքը դատապարտում է իրան հասարակական կարծիքի առաջ։

—«С. Пет. Вѣд.» լրագրում կարդում ենք. «Ստամբուլի թերթերից մի քանիսը մատնանիշ են լինում այն բանի վրա, որ սուլթանը իր անձնական գանձի մինիստր հայազգի Յովհաննէս Սագրզ էֆէնդիին չնորհելով Օսմանիէի առաջին աստիճանի շքանշան, ուզեցել է «ուշադրութեան մի ցոյց անել հայ ժողովրդին»։ Զառամեալ Յովհաննէս Սագրզեան—կաթոլիկ դաւանութեան է պատկանում։ Նա իր ուսումն առել է Վենետիկի Մխիթարեանների մօտ։ Երկար ժամանակ նա քաղաքատնտեսութեան դասատու էր Ղալաթա—Սարայ լիցէում։ Մակ-Միլլէրի խօսքով, Սագրզ-էֆէնդին հրաչակեց իրան մի գիւտ անելով համեմատական լեզուագիտութեան շրջանում։ Նա հետազօտեց ակադեան լեզուն (ակադները Միջագէտքի մէջ ապրող մի ժողովուրդ էին), որ անհետացել է 7 դար առաջ նախ քան Քրիստոսի ծնունդը, եւ ապացուցեց, որ տուրանական լեզուների ճիւղին պատկանելով, ակադեան լեզուն ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ուրարտու հին-հայկական ազգաբնակութեան լեզուն, որ ապրում էր Արարատեան շրջանում, որտեղից նա մասամբ գաղթեց Միջագէտք։ Ակադեան լեզուն, մի քանի գիտնականների կարծիքով, մի եւ նոյն ժամանակ հին քաղդէական լեզու էր, որ պատկանում է լեզուների սեմիտական ճիւղին։ Այդպիսով, Սագրզ-էֆէնդիի գիւտի ամբողջ հետաքրքրութիւնը կազմում է այն բանը, թէ հին հայկական լեզուն կապող օղակ է ծառայում, գիտնականների կարծիքով, լեզուների երեք բոլորովին զատ ճիւղերի մէջ (տուրանական, սեմիտական եւ հնդկա-եւրոպական), որով եւ ապացուցվում է նրանց անկասկած ազգակցութիւնը։ Վախենալով թիւրքաց կառավարութեան զայրոյթը գրգռել իր դէմ, Յովհաննէս Սագրզ-էֆէնդին կտակեց հրատարակել իր բազմամեայ աշխատանքի արդիւնքը միայն իր մահից յետոյ։ Սուլթանի անձնական գանձի մինիստրներ, Սագրզ-էֆէնդիից առաջ, նոյնպէս հայեր էին, այն է Միքայէլ փաշա Փորթուգալեան եւ Յակոբ-փաշա Գաղէղեան»։

—«Berliner Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է, որ Թիւրքիան զէնքը ձեռքին սպասում է մակեդոնական հարցի զարգացմանը եւ ամենեւին լաւատես չէ ապագայի վերաբերմամբ։ Կ. Պոլսում արթուն կերպով հետեւում են այն ամենին, ինչ կատարվում է Բոլգարիայում, բայց ամեն կերպ աշխատում են ոչինչ դժուարութիւններ չը յարուցանել բոլգարական կառավարութեան առջեւ, որովհետեւ սուլթանը ցանկանում է խուսափել զինւորական ընդհարումից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

24 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 24-ին արտասահման ճանապարհ ընկաւ Ռուսաստանի եւ Գերմանիայի չինական արտակարգ դեսպան Եանգ-Իւ իր ամուսնով, որդով եւ երկու աղջիկներով։

ՊԷԿԻՆ։ Պէկինի պաշտօնական լրագրում հրատարակված է հրովարտակ, որով դատապարտվում են նահանգում 53 յանցաւոր մանդարինները պատիժներին, որոնց թւում կայ մահվան պատիժ երեքի համար։ «Այդ 53 դէպքերից ոչ մէկի մէջ,—աւելացնում է իրանից «Վոլֆի գործակալութիւնը», գերմանական շահերը չեն շօշափված անմիջապէս, այդ պատճառով հարցի լուծումը, որքան պատիժը անհրաժեշտ է եւ որքան նա համապատասխանում է յանցանքին, Գերմանիան կը թողնէ ուրիշ պետութիւնների ներկայացուցիչների լուծման»։

ՍՕՖԻԱ։ Ապրիլի 23-ին, ժողովրդի ահագին բազմութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ Կայսր Ալէքսանդր II-ի արձանի հանդիսաւոր հիմնարկութիւնը։ Իշխան Ֆերդինանդը այդ առիթով խորը զգացված ճառ արտասանեց, որը ամբողջապէս նուիրված էր Ազատարար Թագաւորի անմոռանալի յիշատակին եւ ջերմ ոգեւորված խօսքերով յաւիտենական շնորհակալութիւն յայտարարեց ի Տէր հանգուցեալ Միապետին եւ Ռուսաստանին։ Այսօրվայ փառաւոր տօնախմբութեան ժամանակ պարզ երեւացին Բոլգարիան նրա մեծ ազատարարի հետ կապող զօրեղ կապերը։

ՍՕԳԻԱ։ Հաղորդում են, որ ծովային

մինիստր Դիրսէն հրաժարականի խնդիրք ներկայացրեց։

25 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Շնորհվում է 3-դ արեւելեան-սիբիրեան հրացանաձիգ բրիգադայի հրամանատար գեներալ-մայոր Ստեսէլին գեներալ-լէյտընանտի աստիճան՝ չինացիների դէմ եղած գործերում քաջութիւն ցոյց տալու համար. Քութայիսի զինուորական նահանգապետ գեներալ-մայոր Գէրշէլմանին տրվում է գեներալ-լէյտընանտի աստիճան՝ նշանակելով նրան Վարշավայի զինուորական շրջանի շտաբի հրամանատար։

ԲԵՐԼԻՆ։ Կոմս Վալդերզէէ հաղորդում է Պէկինից, «Հեծեալ գնդի պօրուչիկ Կուամէր իր պահակախմբով, 200 կիլոմետր դէպի արեւմուտք Կալգանից, Նինիւանսինի մօտ, հանդիպեց թշնամու հեծելազօրքին եւ աջողութեամբ յարձակում գործեց նրա վրա»։

ՏԵԱՆՁԻՆ։ Երէկ առաւօտեան այստեղից երկաթուղիով Պէյչժօ ուղարկվեց գերմանական հետեւակ գունդը։ Անգլիական թնդանօթաձիգ զօրաբաժինը չորեքշաբթի օր գնում է Շանգհայգուան, ուր կը մնայ ամբողջ ամառը։ Ռուսական վերջին զօրքերը այսօր հեռացան դէպի Պօրտ-Արտուր. դէպի կայարան նրանց ուղեկցում էին ուրիշ ազգերի զօրաբաժինները։ Ներկայումս այստեղ գտնվող ծովապետ Սէյմուր այսօր ճանապարհ է ընկնում դէպի Տակու։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնապէս հրատարակված է մայիսի 10-ին 2,500,000 ֆունտ ստերլինգի պետական արժեթղթեր դուրս թողնելու մասին, գործածութիւնից մայիսի 2-ին դուրս եկած արժեթղթերի փոխարէն։

ՍՕՖԻԱ։ Թագաւոր-Ազատարարի արձանի հիմքը դրեց իշխանը պրոգրամի համաձայն. երեկոյեան ջահընթացք էր, որի ժամանակ ցոյց տրվեցին ապրիլեան ապստամբութեան տեսարանները. վերջում ցոյց եղաւ ի պատիւ իշխանի, որը ապա ճառ արտասանեց յոյս յայտնելով, որ բուլգարների տոկունութիւնը նրանց ամենայուսալի տարր կը դարձնէ Բալկանների վրա եւ կը նպաստէ յաղթութիւններին։ Ջահընթացքը դիմեց ապա դէպի ռուսաց դիպլոմատիական գործակալութեան ընակարանը։ Բախմետեվ շնորհակալութիւն յայտնեց ցոյցի համար։ Եթէ չը հաշուել այն բանտի առաջ եղած ցոյցերը, ուր բանտարկված է Սարաֆով, —ամեն ինչ կատարելապէս հանդիստ անցաւ։

ՍՏԱՆԴԷՐՏՕՆ։ Ապրիլի 22-ին այստեղից դուրս գնացին մի քանի բրիտանական զօրասիւններ միանալու համար Պլատրանդից դուրս եկած զօրասիւնի հետ։ Ամբողջ ճանապարհի ժամանակ բօէրները կրակ էին պահպանում։ Պլատրանդի զօրասիւնը նոյն դիշերը եւ եթ հասաւ մինչեւ Զէլտեֆրէդէն, որի ժամանակ թշնամին մի փոքր դիմադրութիւն ցոյց տուեց։ Հետեւեալ օրը գնդապետ Կոլվիլի զօրասիւնը յանկարծակի յարձակվեց բօէրների բանակի վրա Ոյակինի մօտ, որի ժամանակ երեք վիրաւորված բօէրներ գերի ընկան։ Զորս սայլեր, 13 ձիեր, 500 հատ տաւար եւ ռազմամթերքի պաշարներ աւար վերցրվեցին։ Մառախուղի պատճառով անհնարին էր հալածել թշնամուն։ Զօրասիւնը ապա շարունակեց արշաւանքը դէպի հարաւ եւ յարձակումն գործեց բօէրական մի ուրիշ բանակի վրա, առանց դիմադրութեան հանդիպելու. Մաքսիմ Նորդէնֆիլդ թընդանօթը եւ մի քանի սայլեր պաշարներով ընկան անգլիացիների ձեռքը. նոյն այդ ժամանակ Պլատրանդի զօրասիւնը արշաւում էր Վաալի վրա։

Ապրիլի 22-ին բօէրները եռանդուն յարձակում գործեցին բրիտանական լրտեսող զօրքերի վրա, բայց վերջիններին աջողվեց պահպանել իրանց դիրքը։ Անգլիացիներից սպանվեցին երեք հոգի եւ երկուսը վիրաւորվեցին։ Վերջ ի վերջոյ թշնամին արտաքսվեց։

Բօէրական տեղեկութիւնների համեմատ, Բրիցի 250 մարդուց բաղկացած զօրաբաժինը միացաւ Խրիստիան Բոտայի զօրաբաժնի հետ, որ բաղկացած էր 350 մարդուց երկու թընդանօթներով։ Միացեալ զօրաբաժինը կանգնած է այժմ դէպի արեւելք Վետրօկֆոնտէյնից։ Գնդապետ Բուլլոկ երէկ կռիւ ունեցաւ այս զօրասիւնի հետ. հետեւանքը դեռ եւս յայտնի չէ։

ԼՕՆԴՕՆ։ Հաւայնքների ժողով։ Ուիլլիամ Ռէդմոնդ հարցնում է, թէ արդեօք կառավարութիւնը տեղեկութիւններ ունի, որ գերմանական զօրքերը Չինաստանում հրացաններ էին արձակում բրիտանական մակոյկի վրա։ Կրօնբէրն պատասխանում է, թէ կառավարութիւնը ոչինչ տեղեկութիւններ չէ ստացել այդպիսի լուրերի մասին։ Ռէդմոնդ ապա հարցնում է, թէ ճիշդ է արդեօք, որ չինական կառավարութիւնը դիմել է պետութիւններին յայտագրով Մանջուրիայի վերաբերմամբ, եւ թէ նա ինչ է առաջարկում այդ յայտագրում։ Կրանբօրն պատասխանում է, թէ կառավարութիւնը վերջերս Չինաստանից մի այդպիսի յայտագիր չէ ստացել։ Բլէկ դիմում է կառավարութեանը հետեւեալ հարցով. որովհետեւ ոսկու շահագործութիւնը Տրանսվաալում վերսկսվեց, արդեօք քայլեր կանվեն ստացված ոսկին հարկի ենթարկելու համար։ Չեմբերլէն պատասխանում է, որ հանքերը կը վճարեն նախկին հարկերը, մինչեւ որ նոր հարկեր չը դրվեն։ Ապա յետագայ վիճաբանութիւնների ընթացքում Բրոդրիկ յայտնեց, թէ մի քանի օր առաջ Կիտչենէրից տեղեկութիւն ստացաւ, որ այն բոլոր կամաւորները, որոնք մնած էին զանազան գնդերի մէջ, գտնվում են այժմ Կապշտադաի ճանապարհի վրա կամ արդէն նաւերն են նստեցրված՝ Անգլիա գնալու համար։ Կիտչենէրի զօրքերի դասաւորութիւնից, ինչպէս վերջինը հաղորդեց իրան վերջին պօստով, նա, մինիստրը, եզրակացնում է, որ Կիտչենէր յոյս է տածում շուտով հնարաւորութիւն ունենալ ազատելու եօմանների սկզբնական զօրաբաժնին պատկանող եւ մնացած կամաւորներին, որովհետեւ, նրա կարծիքով, նրանք հանգստանալու կարիք ունեն։ Նա, Բրոդրիկ, չէ կարող, սակայն, որոշել, թէ երբ արդեօք նրանք կարող են ազատվել ծառայութիւնից։

ԿԱՊՇՏԱՆՏ։ «Տանտալկասատ» շոգենաւը անծաղուտի մէջ խրվեց Ծովահորթի կղզու մօտ։ Բոլոր ճանապարհորդները ափ են իջեցրված այստեղ։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Ինչպէս հաղորդում է հեռագիրը Բէրմուդեան կղզիներից ապրիլի 19-ից, մեծ թւով բօէրներ գնդի պաշտպանութեան տակ ապրիլի 17-ին ուղարկվեցին Բէրմուդեան կղզիները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր կայսրը գեներալ կաուլբարսին շնորհեց Ալէքսանդր Նէվսկու շքանշանը սրերով՝ չինացիների դէմ եղած կռիւներում ցոյց տուած քաջութեան համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ
Յ. Յ. ՂՈԿԻԷԼԵԱՆԻ

Ընդունում է՝ վէներական, ախտական, մորթու եւ ներքին հիւանդութիւն ունեցողներին։
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5— 8 ժամը.
Միխայլովսկայա եւ Նէմեցկայա փողոցների անկիւն, տուն Սլիվիցկու, մուտքը Նէմեցկայա փողոցից։ 18—25

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Վերադառնալով արտասահմանից՝ ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամատուած ծնօտների պրօթէզներ (протезы)։
Առաւօտեան 8—2 ժամը
Երեկոյեան 5—8 »
Հասցէն՝ Пушкинская ул. № 16, надъ магазиномъ Шадинова. 6—25

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

համար հարկաւոր են ուսուցիչներ՝ ա) մաթեմատիկոս, բ) ֆիլոլոգ (Ռուսաստանի համալսարան աւարտած), իւրաքանչիւրի դասերի թիւը շաբաթական 24, իսկ դասագինը 55 ռուբլի, գ) մէկ ուսուցիչ ռուսաց ուսուցչական ինստիտուտն աւարտած, դասերի թիւը շաբաթական 24, իսկ դասագինը 45 ռուբլի։
Դիմել՝ Эривань. Инспектору Армянской Семинаріи Г. Татіеву.
1—1 Տեսուչ դպրոցի՝ Գ. Տատեան

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԴԻՐԵԿՏՕՐԸ

յայտնում է, որ առաջիկայ 1901—1902 ուսումնական տարվայ համար չեն լինի աշակերտների ընդունելութիւններ ԱՒԱԳ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ, ԵՒ ԱՌԱՋԻՆ ՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ տեղ չը լինելու պատճառով։
(ապ. 22, 25, 26, 29, մայիսի 6 եւ 13)

ԲԺՇԿԱՊԵՏ
ԶԱԽԱՐԻԷԳԵԱՆ

վերադառնալով արտասահմանից, վերանորոգում է հիւանդների ընդունելութիւնը մայիսի սկզբից Կովկասեան հանքային ջրերում (Պեատիգորսկ)։ 3—10

Պետերբուրգի գրաքննիչից ստացված, մամուլի տակ է եւ յունիս ամսի վերջերին լոյս կը տեսնի Մոսկվայում

ԴԴՎԱՏԱԿՆԵՐ

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Շքեղ տպագրութիւն, 450—500 մեծադիր երես)
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

Ժողովածուն նուիրված է Գրիգոր Զանշեանի յիշատակին։ Արդիւնքի 2/3 մասը յատկացված է հայ որբերին, իսկ 1/3 մասը աշխատակցող գրողներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մասն I. Հ. Ղ. Ալիշան՝ Նամակ (ֆաք-սիմիլէ)։—Յով. Յովհաննիսեան՝ «Մենք գնում էինք»... (բան.)։—Ա. Իսահակեան՝ Սիրոյ երգը։—Ալ. Ծատուրեան՝ բանաստեղծութիւններ։—Վ. Փափազեան՝ Աւետաց երկրում։—Ա. Իսահակեան՝ «Ախ, մեր սիրտը»... (բան.)։—Ա. Ահարոնեան՝ Դարձը։—Յովհաննէս Թումանեան՝ Գօգան ու Մուղան։—Գ. Բաշինջաղեան՝ Բարերարներ։—Ալ. Ծատուրեան՝ Կալանաւորի օրագրից (բան.)։—Ս. Հախումեան՝ ընդհատվող հեկեկանքներ։—Սրինգ՝ «Ի՞նչ երգել»... (բան.)։—Լ. Նազարեան՝ Բեկորներ։—Պ. Պոռշեան՝ Հինգերորդ գինիգիծը։—Յով. Տէր-Միրաքեան՝ Անցած-գնացած օրերից։—Արշակ Զօպանեան՝ Արուեստի էջեր։—Գ. Զուբար՝ Երազ։—Ռ. Պատկանեան՝ Փոքրուխին Աւագը (անտիպ)։—Մ. Նալբանդեանի՝ մի նամակը։—Վ. Փափազեան՝ Ըմբոստ երգեր։

Մասն II. Հր. Ալճառեան՝ Հայոց ծագումը և նախապատմական շրջանը։—Վ. Սուրէնեան՝ Հայ ճարտարապետութեան տեղը գեղարուեստի պատմութեան մէջ։—Ե. Շահազիզ՝ Հայոց վանքերը և նրանց դերը հայ կեանքում։—Կ. Պասմաջեան՝ Զուարթնոց եկեղեցոյ պեղումները։—Գ. Խատիսեան՝ Հայոց լեզուն և նրա բարբառները։—Լ. Նազարեան՝ Հայոց սովորութեան—իրաւունքի ուսումնասիրութեան նշանակութիւնը և մեթոդը։—Մ. Բերբերեան՝ Գրական ակնարկներ (Սմբատ Շահազիզ)։—Բժ. Ա. Բուդուղեան՝ Բժշկի խոհերից։—Իւրիյ Վեսելովսկի՝ Արևմտեան Եւրոպայի ազդեցութիւնը ռուսահայ գրականութեան մէջ։—Գր. Վանցեան՝ Մեր ստիլիստները և մեր լեզուն։—Ռ. Խանազատեան՝ Փոքր Ասիան և շինվելիք երկաթուղիները։

Վաղօրօք բաժանորդ գրվողները գործակալների մօտ՝ կը վճարեն 1 ՐՈՒԲԼԻ, ճանապարհածախսով՝ 1 ր. 50 կ., լոյս տեսնելուց յետոյ կարժենայ 1 ր. 50 կ. եւ ճանապարհածախսով՝ 2 ՐՈՒԲԼԻ։

Բաժանորդագրութիւն ընդունվում է մինչեւ յունիս 1-ը։ Կարելի է գրվել հետեւեալ տեղերում։

Մոսկվա. պ.պ. Բ. Արուշանեան, Գ. Խատիսեան, Լ. Նազարեան։
Բաստոմ. Գրավաճառանոց «Издатель» եւ պ. Մ. Բերբերեան։
Նոր-Նախիջեւան՝ պ.պ. Եր. Շահազիզ եւ Գ. Զուբար։
Բագու՝ Մարդասիր. ընկեր. գրադարան՝ պ. Լ. Մանուէլեան եւ գրավաճառ. Սամսոն Յարութիւնեան։
Բալախանի՝ «Նէֆթ» ընկերութեան պրօմիալա, պ. Բալասի Գաբրիէլեան։
Թիֆլիս՝ Կետրոն. գրավաճառանոցի եւ «Տարազի» խմբագրատուն։
Գանձակ՝ Օր. Հ. Նաբաթեան եւ պ. Յ. Մելիք-Բեգլարեան։
Թաւրէզ՝ Դքտր. Կ. Փաշայեան։
(Հ.) 1—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.

եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 9/22 մայիսի շոգենաւ՝ ՄԻՆԳՐԷԼԻ, կապիտան ՎԵՐՆ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկեանի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 13—20

!!! ՎԵՐՋԻՆ ՀՐԱՇՔ !!!
Ս. Մ. ԱՆԱՆՈՎԻ՝ ՄՈՍԿՎԱՅԻ ԳԻԼԶԱՆԵՐ

Շինվում են ֆրանսիական ամենալաւ «լը Դէրնիէր Կարտուշ» թղթից

Ս. Մ. Անանովի՝ Մոսկվայի գիլզանները բարակ են, գեղեցիկ, մոխիր չեն թողնում եւ ոչնչացնում են նիկոտինի ներգործութիւնը։

Պահանջեցէք ամեն տեղ Ս. Մ. Անանովի՝ Մոսկվայի գիլզանները«

Գործարանը—ՄՈՍԿՎԱՅՈՒՄ, բաժանմունքը—ՐՈՍՏՕՎՈՒՄ ԴՈՆԻ ՎՐԱ։
6—10

Կօնֆէկտի եւ շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք՝ կարամել մրգեղէնից (фруктовая карамель), կարամել լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-շաքար (պաղ-շաքար, леденецъ)։

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։

Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմոնեանի, Զ. Ի. Սուլխանեանի, Զ. Գ. Պոպովի, Եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հաջի-Ռախմանովի պարկական մագազինում, Պետրոի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆոն № 362։
13—100

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Апрѣля 1901 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27